

Հայկական գիտականագույն հանգույց  
Armenian Research & Academic Repository



ပေါ်နဲ့ သွေးတော်လှုပ်နည်းလုပ်မှု ပေါ်နဲ့ သွေးတော်လှုပ်နည်းလုပ်မှု ပေါ်နဲ့ သွေးတော်လှုပ်နည်းလုပ်မှု

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported License.

ନାମ ଲେଖକଙ୍କ ଦୃସ.

You are free to:

**ANSWER:**  $\{x \in \mathbb{R}^n \mid \|x\|_1 \leq 1\}$  is a closed convex set.

**ANSWER =  $\cos^2(15^\circ) + \sin^2(15^\circ) - 2\cos(15^\circ)\sin(15^\circ)\tan(15^\circ)$**

ԵՌՈՂՋԱՎԱՀԱՆ ԺՈՂՈՎՐԴՅԱԿԵՐԸ  
ԿՈՄԻՍԱՐԻՒՄՏԻ ՀԵՆՐԵՄԵՑԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ  
ԴՐԱՅՈՒՅՑ Հ 7

Սան-համանարտկագիտական բաժնի  
Սան-լուսավ. ՅԵ/բաժին

ԲԺ. Հ. ՄԻԹՉԱԲԵԿՅԱՆ

ՊԱՀԱՐԱԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՌԺՈՂՈՎՐԴՅԱԿԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 1926

# ՀԱՅԱ ԱՌԺՈՂՈՄՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բուս-լատին-հայ բժշկագիտական բառարան . . . . .	Գի՞նը 3 ա.
2. Բժշկական հանդես № 1 . . . . .	1 »

## ՀԱՆՐԱՄԱՏԶՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԲՈՒՑԿՆԵՐԸ Գի՞նը

1. Պոպոնիկ Դարոյի դատը (ագիտ-դատ սիֆիլիսի մասին. սպառված).	
2. Սիֆիլիս (սպառված)	10 կ.
3. Մալարիա (սպառված)	10 »
4. Առողջապահական հուշատետր	5 »
5. Մաշկի մի քանի տարածված հիվանդությունները	10 »
6. Նվեր գեղջկուհուն	10 »
7. Պալարախտ	10 »

## Շուտով լույս կտեսնեն Հանրամատչելի գրադարանի հետևյալ գրքույթերը

1. Տրախոմա
2. Ճիմուներ

Տպագրվում են և մոտ ապագայում լուրս կտեսնի  
— Զ Ե Ռ Ն Ա Ր Կ —

## ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Ցանկացողները պետք է դիմեն Առժողկոմատի  
Սանիտ-լուսավորության յենթարաժնին.

Առաջ քաղաքներից հետևյալ հասցեյով՝

Երևան Նародному Комисариату Здравоохранения  
Спандарян № 27.

616.995

ՀԱՅՈՂ ԶԱՊԵՀԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻՎԱՅԻ  
ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ԴՐԱԴԱՐԱՆ  
ԴՐՔՈՒՅՑԿ № 7

Սան-համարակալագիտական բաժնի  
Սան-լուսավ. ՑԵ/բաժին

ԲԺ. Հ. ՄԵՐԶԱԾԵՎԵԱՆ

ՊԱՀԱՐԱԿ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՌՁՈՂԿՈՄՈՏԻ

1926 թ. ՅԵՐԵՎԱՆ

**ՀԱՅՊՈԼԻԿՐԱՔԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ**

---

**Դրամ. 760 ր. պատու. 4378. Տիրած 5000**

## ՊԱԼԱՐԱԿԱՏ (ՏՈՒԲԵՐԿՈՒԼՑՈՉ)

Տարածվածությունը :

Եթ ավերումները յերկրիս յերեսին պալտրախոր սկսել ե շատ վաղուց. դեռ ևս հնագագան մարդուն ծանոթ եր նա, բայց նա ծաղկելու արագ կերպով տարածվել է, յերբ սկիզբն ե դրվել մեծ քաղաքների, յերբ սկսել ե դարդանալ տրդյունաբերությունը և դեպի իրեն քաշել մարդկանց բազմությունը։ Այժմ պալտրախոր տարածված է ամենուրեք. չկա անկյուն յերկրիս յերեսին, վոր նա դրած չլինի եր վոտքը ու մարդկությունից նա տանում է ավելի շատ զոհեր, քան մի վորե և ուրիշ հիվանդութուն։ Ամեն տարի պալտրախոր խլում է միլիոնավոր կյանքեր. յերկրագնդի վրա բոլոր մեռնողների մոտ մի յոթերըրդ մասը մեռնում է պալտրախորից։

Մի շարք գիտնականներ, ցանկանալով վորոշել, թե մարդկանց վո՞ր տոկոսն է վարակոված պալտրախորով քննել են, հազարավոր

գիակներ և դտել են, վոր քննած գիակների մինչև 75 տոկոսը (հարյուրից 75-ը) վարակված է թոքախտով, թեկուզ թոքախտն անմիջականորեն մահվան պատճառ է յեղել քրնավածների միայն մոտ 15 տոկոսի վերաբերմամբ: Թոքախտը—թոքերի պալարախտն է:

Թե վորքան տարածված է թոքախտը մարդկանց մեջ, կարող են ապացուցել նաև հետեւյալ թվերը՝

Ամեն տարի թոքախտից մեռնում են՝

1. Հյուսիսային Ամերիկայի Միացյալ նահանգներում . . . . .	138·000 մարդ
2. Ֆրանսիայում . . . . .	100·000 մարդ
3. Գերմանիայում . . . . .	120·000 մարդ
4. Ռուսաստանում . . . . .	500·000 մարդ

1908 և 1909 թվականներում Լենինգրադում տարածված էր խոլերայի համաձարակը: Այդ յերկու տարվա ընթացքում խոլերայից մահացել են 7061 մարդ, մինչդեռ նույն ժամանակամիջոցում թոքախտից մեռել են 11 հազարից ավելի մարդ:

Թոքախտն ավելի տարածված է մեծ քաղաքներում, քան գյուղերում: Քաղաքն՝ իր զարգացած արդյունաբերությամբ ու ազգաբնակչության մեծ մասի կենցաղի վատ պայման-

Ֆերի շնորհիվ, ստեղծում է հարժար հող թոքախտի տարածման համար:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՑԵՎ  
ՆՐԱՆՑ ՊԱՏՃԱՌԼ

Մեղնից ո՞ւմ չեն ծանոթ բծավոր, վոքովայնի և կրկնվող տիֆերը, կանիճը (գիղենտերիա), գիֆտերիտը (բկացավ), քութեց կարմրուկն ու ծաղիկը: Ո՞վ սարսափով չի լսել կամ կարդացել ժանտախտի կամ խոլերայի մասին: Դրանք և զեռ ուրիշ շատ հիվանդություններ պատկանում են վարակիչ հիվանդությունների շարքին: Մի տեղ յերեալուց հետո նրանք հատկություն ունեն անցնելու հիվանդից առողջին և այդպիսով կարճ ժամանակի ընթացքում կարող են հիվանդանալ շատ մարդիկ:

Յեղել են զեպքեր, յերբ որինակ ժանտախտը մի քանի շաբաթվածք մեջ գյուղեր կամ նույն խոկ ամրող քաղաքներ և դատարկել, մահացրել:

Այդ սարսափելի հիվանդությունների պատճառն ի՞նչ և ի՞նչի՞ց են առաջանում նրանք:

Հին ժամանակները մարդիկ չ'գիտեին վարակիչ հիվանդությունների խօսկական պատ-

ճառը, եւ չար աչք, չար վոգի, սրբեր կամ քա-  
միներ չեյին մնում, վոր չմեղադրվեյին հի-  
վանդությունն առաջացնելու մեջ։ Բայց ահա-  
պարզանում ե մարդկային միտքը, զարդանում  
ե դիտությունը, վորը բացատրում ե շատ ու-  
շատ յերեսույթների պատճառը, բացատրում ե  
նաև վարակիչ հիվանդութունների եյութունը։

Դիտությամբ պարապող մարդիկ վազուց-  
ի վեր աշխատում եյին իրենց աչքի տեսողա-  
կան ուժը շատացնել, այնպես անել, վոր ա-  
վելի լավ ու մանրամասնորեն կարողանան տես-  
նել փոքրիկ առարկաները։ Այդ նպատակով  
նրանք ոգովում եյին խոշորացույցով։

Խոշորացույցը վոսսի նման, յերկու կող-  
մից ուսուցիկ մի ապակի յե, վորի տակ նայվող  
առարկան դիտողի աչքին մեծանում ե մի քա-  
նի անգամ։ Բայց դա չբավարարեց գիտնական-  
ներին ու նրանք շարունակեցին փնտոել՝ հնա-  
րել մի այնպիսի գործիք, վորն ավելի շատ  
անգամ պիտի մեծացներ առարկաները։ Վերջը-  
մարդիկ գտան, վոր յերբ առարկային նայում-  
են յերկու խոշորացույցի միջոցով, այդ գեղ-  
քում առարկան մեծացնվում ե ավելի շատ ան-  
գամ, քան մի խոշորացույցով նայելիս։

Ողովելով այդ մտքից, սրանից մոտ 340)

տարի առաջ Հոլլանդիայում ապակու վրա աշխատող յերկու արհեստավոր յեղբայրք, Յանսեն ազգանունով, շինեցին մի գործիք, վորի խողովակի մեջ մի քանի խոչորացույց ապակիներ շարված ելին միմիանց վրա. Նրա տակ դրված առարկան մեծանում եր շատ անգամ։ Այդ գործիքը կոչվեց մանրադիտակ (տ. նկ. 1)։



Նկար 1.

Սկզբում մանրադիտակներն ավելի համարակ ելին, հետո գնալով կատարելագործվեցին, այնպես վոր ներկայիս մանրադիտակները մեծացնում են մի քանի հազար անգամ։ Մարդու մազը մանրադիտակի տակ մի հաստձողի չափ ե դառնում։

Մանրադիտակը մարդու աչքին բացեց մի նոր, շատ հարուստ ու հետաքրքիր աշխարհ։ Նա ցույց տվեց, վոր բացի տեսանելի կենդանիներից ու բույսերից, գոյություն ունեն շատ մանր, հասարակ աչքին անտեսանելի եյակներ, վորոնք տեսանելի յեն դառնում մէտյն այն ժամանակ, յերբ նրանց վրա նայում ենք վոչ պակաս, քան 5-6 հարյուր, յերբեմն ել հազար ու ավելի անգամ մեծացնող մանրադիտակու։

Յեթե վերցնենք մի փոքրիկ կաթիլ հին կաթ կամ կեղտոտ ջուր ու դնենք մանրադիտակի տակ, նայենք նրա վրա, մենք կնկատենք, վոր այդ կաթիլի մեջ կան բազմաթիվ, կենդանի, շարժվող եյակներ, նույնը կ'զանենք մենք մի չնչին կտոր հոտած մսի, կեղտոտությունների, թքի, խորխի մեջ, հողի, ջրի և նույն խոկոդի մեջ։

Այդ փոքրիկ կենդանի եյակներին ավել են «մանրե» անունը։ Նրանք տարածված են ամենուրեք ու շատ շուտ աճում, բազմանում են, յեթե համապատասխան միջավայրի ու այլ բարեհաջող պայմանների մեջ են ընկնում։

Մանրեների տեսակները բազմաթիվ են, նրանք տարբերվում են միմիանցից արտաքին ձևերով (տես նկար 2.)՝ մեկը նման է կարճ,

փոքրիկ ցուպիկի, մյուսները՝ թելիկների, ուրիշները նման են կետերի կամ ստորակետերի և այլն։ Տարբերվում են նրանք միմիանցից նաև իրենց ուրիշ հատկություններով։




Նկար 2.

Ահա այդ մանրեներն են վարակիչ հիվանդությունների պատճառը։ Գիտնականների հետազոտությունները ցույց են տվել, վոր մանրեներն այս կամ այն ճանապարհով ընկնում են մարդու մարմնի մեջ, զարդանում, բազմանում, թունավորում նրան ու առաջացնում այն, ինչ-վոր կոչվում է վարակիչ հիվանդություն։

Մանրեներն ազդում են կազմվածքի վրա կամ իրենց արտադրած թույնով, կամ նրանց վոչնչանալուց հետո նրանց մեջ յեղած թույնով։

ԹՈՔԱԽՏԻ ՄԱՆՐԵՆ ՅԵՎԼ ՆՐԱ ՀԱՏ-  
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ :

Ամեն մի վարակիչ հիվանդություն ունի  
իրեն հասուլ մանրեն։ Թոքախտն ել վարակիչ  
հիվանդություն եւ ապա վո՞րն ե թոքախտի  
մանրեն։



Նկար 3. պրոֆ. ԿՈԽ

ՅԵՐԿՈՐ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՐԳԻԼ ՀՊԻԱԿԵՐԻՆ ԹՈ-

քախտն առաջացնող մանրելին. և 1882 թվին  
միայն Գերմանացի մի մեծ գիտնական, Կոխ  
անունով (տ. նկար 3). առաջին անգամ զտավ  
այդ մանրեն, վորն ուրիշ կերպ կոչվում է նաև  
«Թոքախտի բացիլ» (շատերը նրան անվանում  
են «Կոխի բացիլ») :

Կոխն ապացուցեց, վոր յեթե քննենք թո-  
քախտավորի խորխը մանրադիտակով, նրա մեջ  
մենք կգտնենք բազմաթիվ մանրեներ-բացիլ-  
ներ :



Նկար 4.

Այդ բացիլները նման են ցուպիկների կամ  
ավելի ճիշտ՝ թելիկի կտորների, նրանց յեր-  
կարությունը մի քանի անգամ ավել է, քան-

Հաստությունը (տես նկար 4)։ Յեթէ թոքախտի բացիլներ պարունակող խորիսը որսկենք մի վորեւե կենդանու, նա կվարակվի պալարախտով։ Նման փորձերով այդ մեծ գիտնականին հաջողվել է ապացուցել, վոր քոքախտի անմիջական պատճառն այդ բացիլն է, վորըն ընկնելով մարդու թոքերը հիվանդացնում է նրան թոքախտով։ Նա ապացուցել է նաև, վոր մեր տնային կաթնատու կենդանիներն ու խոզը նույնպես կարող են վարակվել թոքախտով։

Թոքախտի բացիլների զարգանալու համար հարկավոր է մոտ 37° (աստիճան, գրադուս) ջերմություն ու հասուկ սնունդ։ Նրանք տարբերվում են ուրիշ չափ մանրեներից նրանով, վոր ավելի դանդաղ են բազմանում, բայց չափ ավելի դիմացկուն են։ Մութ ու խոնավ տեղերում, շորերի վրա, հասակի փոշու մեջ նրանք ամիսներով կարող են ապրել, իսկ առեւի ճառագայթները չափ շուտ նրանց սպանում են։ Նույնպես սպանում են նրանց մի շարք թունավոր գեղեր՝ ինչպես «սուլեման», «կարբուկան» և ուրիշները, իսկ ամենից լավ սպանում են նրանց կրակն ու յեռացող ջուրը։

Թոքախտի տարածման հանապարհները

Թոքախտավոր մարդիկ ու կենդանիներն են:

Հազար ի՞նչ ձեռվ, ի՞չ ճանապարհով ե կատարվում ե թոքախտի տարածումը, ի՞նչպես և բացիլը հիվանդից դուրս գալիս և մտնում առողջի մեջ ու նրան ել վարակում թոքախտով:

Բացիլը թեեր չունի վոր թոշի, նա իր ցանկությամբ հիվանդի միջից դուրս կալ չի կարող, նա դուրս ե բերվում հիվանդի արտաթորությունների հետ միայն:

Թոքախտավորների թոքերը հարուստ են թոքախտի բացիլներով: Հազարիս թոքախտավորը խորիս ե հանում և նրա հետ միասին նրա թոքերից դուրս են գալիս բազմաթիվ բացիլներ: Խորին ընկնում ե գետին, չորանում, բայց նրա մեջ յեղած բացիլները չեն մեռնում, մնում են կենդանի ու քամուց կամ շարժումներից առաջացած ողի հոսանքից նրանք փոշու հետ միասին ընկնում են ողի մեջ ու շնչած ողի հետ ներս են տարվում քոքերն և վարակում մարդուն քոքախտով:

Այս ձեռվ վարակվելու վտանգն ավելի մեծ է լինում յերբ թոքախտավորը, ինչպես ոտք չաճախ պատահում ե կեղտուա անմաքրասեր

մարդ եռ հազարուց ուղղակի թքում եղետնին,  
խորխը չորանում է. սենյակը որբելու ժամա-  
նակ բացիլներն ընկնում են ողի մեջ վարակվե-  
լու մեծ վտանգ ստեղծում նրա հետ մի բնակա-  
րանում ապրողների, նրա շրջապատողների հա-  
մար։ Ավելի մեծ վտանգի յեն յենթարկվում  
յերեխաները, վորոնք գետնին խազալուց ներս  
են ընդունում իրենց թաթիկների վրա բացիլ-  
ները, յերբ տանում են կեղտոտված մատները  
բերանը կամ ուտում են գետնին ընկած ու քո-  
քախտի մատներով կեղտոտված, վարակված  
հացի կամ մի այլ ուտեստի պատառը։

Այդպիսի դեպքերում թոքախտի բացիլ-  
ները կուլ են զնում ու կարող են հիվանդա-  
ցնել աղիքները կամ ստամոքսից ու աղիքնե-  
րից ծծվում են արյան մեջ և տարվում թոքե-  
րը, վորոեղ նրանք կանգ են առնում ու հիվան-  
դացնում յերեխային թոքախտով։ Արյան մեջ  
ծծված բացիլները կարող են հիվանդացնել  
մարմնի նաև ուրիշ տեղերը։

Վարակում ողի միջոցով

Բացի այդ, հազարու և նույն իսկ բարձր խո-  
սալու ժամանակ թոքախտավորի բերանից  
դուրս են թափավում խորխի և թուքի մանր կա-

թիւներ, վորոնց մեջ զտնվում են թոքախտի բացիլները։ Այդ կաթիւները ցրվում են ողի մեջ ու չնչելու ժամանակ ներս են տարվում հիվանդի սենյակում կենողների թոքերն ու վարակում նրանց։

Դեռ լավ է, յերբ թոքախտավորի խորին ընկնում ե արեի տակ. այս դեպքում արեի ճառագայթների ազդեցության շնորհիվ բացիլները 2 ժամվա ընթացքում սովորաբար փչանում են։

Չոր ու լուսավոր, բայց վոչ արեստ սենյակներում նրանք ապրում են մի քանի որ, իսկ մութ ու խոնավ նկուղներում և սենյակներում նրանք կարող են ապրել ամիսներով ու ելիվարակել մարդկանց։

Վարակում կարի միջոցով

Ինչպես վերը հիշեցինք, թոքախտով հիվանդանում են նաև մեր տնային կենդանիները։ Հաճախ թոքախտի բացիլները տեղավորվում են կովի կրծքի վրա ու նրան հիվանդացնում։ Յերբ մարդ գործ ե ածում այդպիսի հիվանդ կենդանու հում կամ լսով չ'յեռացրած կաթը կամ նրանց կիսահում միսը, նու կարող ե վարակվել պալարախտով։

### Ճանճերի դերը

Վարակը կարող էն տարածել նաև ճանճերը. նրանք նստում են թոքախտավորի խորիսի վրա կեղառուվում նրա մեջ յեղած բացիլներով, ու այդ բացիլներին տանում թողնում են հացի, պտուղների ու այլ կենսամթերքների վրա: Յերբ մարդ ուտում ե այդ կենսամթերքները, նա կուլ ե տալիս նրանց հետ և բացիլներն ու վարակվում:

### Վարակում իրերի միջոցով

Թոքախտավորի բերանից բացիլները թքի հետ միասին հաճախ անցնում են նրա գղալի, բաժակի, պատառազազի և ուրիշ իրերի վրա և, ով գործ ե ածում այդ նույն բաժակը, գղալը, ամանը և այլն, նա կարող է վարակվել պալարախտով: Վարակիչ են նաև թոքախտավորի տեղաշորը, վորոնց վրա հազարու ժամանակ ընկնում են բազմաթիվ բացիլներ: Վարակման վտանգին են յենթարկվում նաև նրանք, վորոնք գործ են ունենում թոքախտավորի թաշկինակների կամ այլ սպիտակեղենի հետ: Վարակվում են յերբեմն բվացարարները հիվանդի շորերից, վարակվում են հիվանդանոցի հանդերձապահները, հիվանդապահները, յերլ

նրանք ներս են շնչում հիվանդների սպիտակեղենի համբելու և ջոկելու ժամանակ առաջացած փոշին:

Վարակման տեսակետից մեծ վտանգ են ներկայացնում բոլոր հասարակական վայրերը, դպրոցները, դործարանները, ժողովատները, թատրոնները, ակումբները, գնացքները, կայարաններն ու ազոթատները։ Այդ բոլոր վայրերում միշտ ել լինում են հայտնի կամ գաղտնի թոքախտավորներ, վորոնք ցանում են իրենց չորս կողմը թոքախտի բացիլներն ու վարակում ուրիշներին։

Կարող ե վարակում առաջ դալ նաև թոքախտավոր ծծմոր կաթի միջոցով։ Վարակել կարող ե հիվանդ մայրն իր յերեխային բերանից հանած «փուփի» միջոցով կամ «ծծակի» միջոցով։ Հիվանդ մայրը կարող ե վարակել յերեխային և համբույրի միջոցով։ Թոքախտավոր հղի կինը կարող ե վարակել արդանդում յեղած իր զավակին արյան միջոցով։ Վերջին գեպքում յերեխան հենց ծննդի որից հիվանդ ե լինում պալարախտով։

Ինչպես տեսանք վերևում, թոքախտով վարակվելու վտանգը շատ մեծ է նրանց հա-

մար, վորոնք ապրում են թոքախտավորի հետ  
միշտույն սենյակում:

Այդ վտանգը ավելի մեծ է թոքախտավոր  
ծնողների յերեխաների համար, վորոնք դեռ  
մանուկ հասակում վարակվում են իրենց ծնող-  
ներից թոքախտով, և այդպիսով ամբողջ ըն-  
տանիքը թոքախտավոր է դառնում:

Նույն ճանապարհով հիվանդությունը անց  
է կենում հետեւյալ սերնդին, սրանցից յերրոր-  
դին և այլն:

Մարդու մարմի ինֆեապաշտպանությունը քո-  
քախտի դեմ:

Բազմաթիվ են թոքախտավորները:

Մեծ է թոքախտով վարակվելու վտանգը.  
տանը, թե դպրոցում, ժողովառեղում, թո-  
տրոնում, գործարանում, կեղտոտ հյուրանոց-  
ներում կամ կայարաններում հիվանդի հետ մի  
սենյակում ապրելիս կամ ավելի ևս նրա հետ  
մի անկողնում քնելիս, նրա հետ միշտույն բա-  
ժակով և ամանով ոգտվելիս, թոքախտով հի-  
վանդ կենդանիների կաթն ու միսը կիսահում  
գործածելիս, մարդ միշտ ել յենթակա յե այդ  
վտանգին:

Բայց յեթե թոքախտի բացիլլներ ամեն

քայլափոխում հետեւում են մեզ հապա ինչ-  
պես ե, վոր ամբողջ մարդկությունը չի վա-  
րակվում ու կոտորվում թոքախտից, ի՞նչպես  
ե, վոր միևնույն ընտանիքում հաճախ հիվանդ-  
ների կողքին մենք տեսնում ենք նաև ընտա-  
նիքի առողջ մնացած անդամներին, կամ հի-  
վանդի հետ ապրողներից մեկը վարակվում ե,  
մյուսը վոչ:

Բնութունը մեզ տվել ե մի շատ ու շատ  
ոգտավետ հատկություն. դա մարմնի՝ զանա-  
զան արտաքին թշնամիներից ու վտանգներից  
պաշտպանվելու ընդունակությունն ե:

Յեթե մեր այդ ընդունակությունը չ'լի-  
ներ, մենք վազուց չքացած կլինելինք յերկ-  
րիս յերեսից:

Թոքախտի բացիլներն ել մեր վտանգավոր  
թշնամիներից են և նրանց դեմ ել, ինչպես բո-  
լոր վարակիչ հիվանդությունների բացիլների  
դեմ, մեր մարմինը գիտե կովել:

Նախ և առաջ մեր մարմինը դրսից պաշտ-  
պանված մաշկով, վորը քանի դեռ առողջ ու  
անվնաս ե կեղտին կամ մանրեներին թույլ չի  
տալիս ընկնել մարմնի մեջ: Իսկ մեր մարմնի  
զանազան խոռոչները («փուչ» տեղերը)՝ բերա-  
նը, ստամոքսը, աղիքները, թոքերի խողովակ-

ները ներսից նույնպես պատած են թաղանթով։  
Այդ թաղանթը տարբերվում է մաշկից ի միջի  
այլոց նրանով, վոր նա շարունակ ծածկված է  
լինում լորձյունով, թքի նման հեղուկով՝ գրա  
համար ել այդ թաղանթը, կոչվում ե՝ «լորձ-  
նաթաղանթ»։ Նա պաշտպանում է մեր մարմի-  
նը ներս խուժած բացիլներից։

Յերբ թռքախտի բացիլը ներս ե չնչվում  
թռքերը, նա նախ և առաջ պատահում է լորձ-  
նաթաղանթի դիմադրությանը, վորը թռյլ չի  
տալիս բացիլներին հաստատվել թռքերի մեջ  
ու զարգանալ։

Միաժամանակ թռքերն աշխատում են այդ  
անկոչու վտանգավոր հյուրին՝ բացիլին գուրս-  
վոնդել մի կտոր խորխի հետ ու հաճախ դա հա-  
ջողվում է նրանց ու բացիլը դուրս ե հանվում  
առանց մի վորեե վնաս հասցնելու մեզ։

Բայց հաճախ ել բացիլները թռքերի խո-  
ղովակների պատերի մեջ ամրանում են ու բա-  
կում են աճել, բազմանալ։

Ահա այստեղ ե, վոր սկսվում է խոկական  
պատերազմը մեր մարմնի ույժերի (թռքերի,  
արյան) և բացիլների մեջ։ Մեր մարմինն աշ-  
խատում է ամեն կերպ խանգարել բացիլների-  
աճելը, վոչնչացնել նրանց, իսկ վերջին-

ներս աշխատում են զարդանալ։ Հիմա տես-  
նենք թե ինչպես է կատարվում այդ կոիվր։

Յեթե վերցնենք մի կաթիլ արյուն ու նա-  
յենք մանրադիտակի տակ մենք կ'տեսնենք, վոր  
այդ կաթիլի մեջ լողում են բազմաթիվ փոքրիկ  
գնդիկներ, վորոնցից վոմանք կարմրագույն են  
ու անշտրժ, դրանցից ե արյան գույնը կարմիր,  
իսկ մյուսները անգույն են, բայց չարժվող։

Վերջինները կոչվում են արյան սպիտակ  
գնդիկներ։ Արյան սպիտակ գնդիկները մեր  
ներքին դորքն են. հենց վոր բացիլն ընկնում է  
մեր մարմնի մեջ, նրանք հարձակվում են բա-  
ցիլի վրա ու սկսվում ե կատաղի կոիվր. յեթե  
հաղթում ե սպիտակ գնդիկը, նա կլանում ու  
մտրում է բացիլին, հակառակ դեպքում կարող  
է վոչնչանալ ինքն ու նրա տեղ գալիս են նոր ու  
նոր գնդիկներ։ Բացի կովելու այս ձևից, մեր  
մարմինն ունի պաշտպանվելու մի շարք ուրիշ  
միջոցներ, վորոնց նպատակն է վոչնչացնել բա-  
ցիլներին կամ գոնե դարձնել նրանց անվնաս։

Այս կովի յելքից ել կախված ե մարդու  
բախտը. յեթե հաջող են հանդիսանում բացիլ-  
ներն, այն դեպքում նրանք սկսում են արագ  
կերպով զարդանալ, հիվանդացնում են մար-

դուն, քայքայում նրա առողջությունն ու վեր-  
ջըն ել գերեզման իջեցնում նրան:

իսկ յերբ հաղթում են սպիտակ գնդիկներն-  
ու մարմնի այլ պաշտպանիչ միջոցները, այս-  
դեպքում մարդ կարողանում է թոքախտի-  
վտանգն իրենից հեռացնել:

Ինչքան շատ ու հաճախ ե բացիլները ներա-  
շնչում մարդ, այնքան վարակման մեծ վտան-  
գի յե յենթարկվում նա, այնքան ավելի շատ և  
լինում բացիլների սերունդը, այնքան ավելի  
բազմաթիվ ե լինում մարդուն հակառակորդ-  
այդ «զորքը», ու յեթե մարդու մարմինը հաղ-  
թում է 100 բացիլի, դա չի նշանակում վոր նա  
կըհաղթի անպատճառ 101 յերրորդին ու այդ  
հարյուր մեկ յերրորդը կարող է դարպանալ և  
առաջացնել հիվանդություն:

Ի՞նչն ե նպաստում մարդու վարակմանը

Թույլ մարդն ավելի շուտ է յենթարկվում  
վարակման, քան ուժեղը. այն բոլոր հանգա-  
մանքները, վորոնք թուլացնում, ջլատում են  
մարդու ուժերը նպաստում են նաև հեշտ վա-  
րակմանն ու ընդհակառակը՝ առողջ, ուժեղ  
մարմնի մեջ, թոքախտի բացիլները պատա-  
հում են միշտ պատրաստի բավականաչափ

իրենց հակառակ ույժերի և ամուր պատճեշների ու վոչնչացվում կամ դուրս են վոնդվում:

ՏԵՓԸ, թոքերի բորբոքումը, կարմրուկը, դողերոցքը և ուրիշ յերկարատե ու ծանր, չատ հիվանդությունները հաճախ առիթ են դառնում թոքախտի զարգացման: Շատերը կարծում են, թե այդ հիվանդությունները փոխվում, դառնում են թոքախտ, բայց իսկապես նրանք միայն հող են պատրաստում թոքախտի բացիլների աճման համար:

Ծխախոտի և խմիչքների ազդեցությունը.

Նպաստում են թոքախտի տարածմանը նաև ծխախոտն ու վոգելից խմիչքները (գինին, ողին): ծխախոտը գրգռում, թուլացնում է թոքերն ու այդպիսի թոքերն ավելի հեշտ են վարակվում թոքախտով, իսկ խմիչքը առհասարակ կոտրում է մարդու տոկունությունը, դիմացկանությունն ու դարձնում նրան յենթակա թոքախտին:

Կենցաղի պայմանների ազդեցությունը.

Յեթե մարդ վատ ե սնվում, յեթե նա ապրում է վատ ու նեղ բնակարանում ու հնարա-

վորություն չունի ողտվելու արևից ազատ,  
և մաքուր ողից, յեթե նա տանում է ծանր, ո-  
ռողջութունը քայքայող՝ հոգնեցուցիչ ու  
ջղայնացնող աշխատանք, յեթե նա ծանրա-  
բեռնված է հոգսերով, նա շատ հեշտ կարող է  
հիվանդանալ թոքախտով:

Այս բացատրությունները պարզում են թո-  
քախախ տարածման ընթացքում նկատված մի  
քանի առանձնահատկությունները: Վաղուց  
արդեն նկատված է, վոր բանվորությունը,  
մարդկանց չունեոր դասն ավելի շատ զոհեր ե  
տալիս թոքախտին, քան ունեորը:

Առավել ևս շատ է հիվանդանում թոքախ-  
տով բանվորության այն մասը, վորն աշխա-  
տում է փոշոտ, կեղաստ ու հաճախ ել թունա-  
վոր նյութեր (զազեր կամ թունավոր փոշի)՝  
արտադրող գործարաններում: Փոշին ու վնա-  
սակար զազերը թուլացնում են թոքերն ու հա-  
խապատրաստում նրանց բացիլլների զարգաց-  
ման համար: Սրան որինակ կարող է ծառայել  
ապակի հղկող բանվորներն և քարտաշները,  
մանվածագործները, փոշոտ բաժանմունքնե-  
րում աշխատողները և տպագրիչները, վորոնք  
բազմաթիվ զոհեր են տալիս թոքախտին:

Հաճախ են հիվանդանում թոքախտով նաև

այն արհեստավորներն ու բանվորները, վորոնք  
ստիպված են շարունակ նստած դրության մեջ,  
կորացած մեջքով աշխատել: Կորացած մեջ-  
քով յերկար նստելը նեղացնում է կրծքի վան-  
դակը, ճնշում թոքերն ու թուլացնում նրանց:  
Ահա թե ինչու կոչկակարների ու դերձակների  
մեջ խիստ տարածված է թոքախտը:

Նույն պատճառն է, վոր իմիջի այլոց, աղ-  
դում ե մտավոր աշխատավորների թոքախտով  
հիվանդանալու վրա: Թե վորքան մեծ ազգե-  
ցություն ունի որինակ բնակարանը թոքախտի  
տարածման և թոքախտից մեռնողների թվի  
վրա, մենք տեսնում ենք հետեւյալ թվական  
տվյալներից:


Ավստրիայի մայրաքաղաք Վեննայի վերս-  
բերմամբ կազմած տեղեկությունների համա-  
ձայն, ամեն մի 10 հազար բնակչից, առանձին-  
առանձին վերցրած, ամեն տարի մեռնում է  
թոքախտից.

Յեթե մի սենյակին ընկնում է՝

ա) Մի բնակիչ . . . . .	10 հոգի
բ) 2 բնակիչ . . . . .	19 հոգի
գ) 3 բնակիչ . . . . .	31 հոգի
դ) 4 բնակիչ . . . . .	47 հոգի

Թոքերը և շնչառություն

Թոքերը մարդու ներքին ամենասեյական գործարաններից մեկն են. նրանց միջոցով են կատարվում մեր շնչառությունը, առանց վորեալ մենք ասլրել չենք կարող:



Նկար 5.

Յեթե դիակից լրիվ կերպով հանենք թոքերը կըտեսնենք, վոր նրանք կախված են մի հաստ խողովակից, վորը կոչվում է շնչափող: (Տես նկար 5): Շնչափողը սկիզբ է առնեւմ մարդու կոկորդից և հասնում է թոքերին, վորովել բաժանվում է յերկու ճյուղի, յերկու ա-

վելի բարակ խողովակների, վորոնցից մեկը  
մտնում է աջ թռքը, մյուսը ձախ թռքը։ Այս  
խողովակներն իրենց հերթին բաժանվում են  
նոր ավելի մանր ճյուղերի, վերջիններս նորից  
են բաժանվում բարակ խողովակների ու վերջը  
առացվում են անթիվ մազային խողովակներ,  
վորոնք վերջանում են բշտիկներով կամ «փու-  
չիկներով»։

Թռքերի խողովակները իրենց ճյուղավո-  
րություններով մոտավորապես նման են մի-  
խիտ, գլխի վրա շուռ տված ծառի, կամ ավելի  
ճիշտ՝ խաղողի վողկույզի։ Յերբ մեր կրծքի  
վանդակը բարձրանում, լայնանում ե շնորհիվ  
մկանների-մսերի, թռքերն ել փուքսի նման հե-  
տեւում են կրծքի վանդակին ու նրանց հետ լայ-  
նանում, ուռչում են։

Լայնանում և ուռչում են թռքերի մեջ  
ճյուղավորվող մանր խողովակներն ու «փու-  
չիկները» և ողը ներս է ծծվում քթով կամ բե-  
րանով, շնչափողի միջով հասնում ե մինչև թռ-  
քերի փուչիկները։ Այս փուչիկների պատե-  
րը չափազանց նուրբ ու բարակ էն։

Դրսի կողմից փուչիկների պատերը վո-  
ղողովում են արյունով, ներսից ամեն մի շնչե-  
լուց մաքուր ողն է բերվում և այսուղ այդ փու-

չիկների պատերի միջով կատարվում է փոխա-  
տվություն «մաքուր» ու «կեղտոտ» ողի։ Այդ  
փուչիկներից մաքուր ողը ծծվում է արյան  
մեջ, փոխարենը արյունից դուրս է գալիս և  
ընկնում փուչիկների մեջ, արդեն ոգտագոր-  
ծած կեղտոտ ողը։

Յերբ կրծքի վանդակը ճնշում է թռքերը,  
նրանք սղմվում են փուչիկների և մանր շրն-  
չախողովակների միջից կեղտոտ ողը վոնդ-  
վում է չնչափողով ու բերանով կամ քթով  
դուրս։ Յեկ այս գործողությունը կատար-  
վում է անընդհատ, քանի մարդ կենդանի յե։

Առողջ մարդը մի բոպեյում կատարում է  
մոտ 16–20 չնչառություն։

Ինչպես ե սկսվում քոքախտը։

Յերբ թույլ, դեպի թռքախտը հակումն ու-  
նեցող մարդը ներս չնչվող ողի հետ թռքերն ե  
տանում նաև թռքախտի բացիլները, վերջին-  
ներս հասնում են մինչև մանր խողովակներն ու  
«փուչիկերը», տեղավորվում են նրանց պատե-  
րի մեջ ու սկսում են զարգանալ և բազմանալ։

Իրենց զարգացման ընթացքում նրանք-բա-  
ցիլները առաջ են բերում թույն, վորից գրգո-

լում ու բորբոքվում են «փուչիկների» ու մանր-  
շնչախողովակների պատերը:

Բացի լի նստած տեղը առաջանում է մի-  
փոքրիկ քորոցի գնդի շափ ուսուցիկ, հետո  
շնորհիվ բացիլների առաջացրած թույնի ու-  
շնորհիվ նրան, վոր այդ ուսուցքը զրկվում է  
սննդից ու մաքուր արյուն ստանալու հնարա-  
վորությունից, ուսուցքը մեռնում է, փափ-  
կում, — «հասնում» ու հաճախ պատովում,  
թողնելով իր տեղը մի փոքրիկ խոց:

Յեթե մարդ մի անդամից ներս է շնչում  
շատ բացիլներ, թոքախտի այդ սկզբնական ու-  
սուցքներն ու նրանցից առաջացած փոքրիկ  
խոցերը կարող են շատ լինել, միաժամանակ  
ցրված թոքերի զանազան տեղերում: Հակառակ  
դեպքում այդ ուսուցիկներից սկզբում լինում  
է մի կամ մի քանի հատ, հետո թոքախտի բա-  
ցիլները բազմանալով, իրենց այդ սկզբնական  
բույներից տարածվում են ու վարակում նոր ու  
նոր տեղեր:

Թոքախտի «սկզբնական ուսուցքի» պատը-  
վելուց, նրա միջի փափկացած մասը (թարա-  
խանման հյութը) բազմաթիվ բացիլների հետ  
միասին թափվում է թոքերի խողովակների  
կամ նրանց վերջում գտնվող «փուչիկների»

մէջ։ Թոքերն աշխատում են ազատվել այդ ա-  
վելորդ նյութերից։ և հաղի հետ խորիսի մի-  
ջոցով դուրս ե բերում այն, ինչ վոր ընկել եր  
փուչիկների մեջ։

Իր մաքրվելու գործը հեշտացնելու հա-  
մար, բացիլների նստած տեղերում լորձնա-  
թաղանթը սկսում է արտադրել առատ լոր-  
ձունք, վորր լվանում և իրեն հետ դուրս ե բե-  
րում բացիլներին հաղալու ժամանակ։

Յեթե թոքախտի «սկզբնական ուսույցք-  
ները» շատ քիչ են լինում, վերոհիշյալ ճանա-  
պարհով հաղալով, թոքերը կարող են իսպառ  
մաքրվել, ազատվել բացիլներից, վորից հետո  
այդ ուսույցքների տեղը մնացած փոքրիկ խո-  
ցերը լավանում են ու մարդ ապաքինվում ե թո-  
քախտից։

Բայց հաճախ հենց հաղալուց բացիլները  
մի կտոր խորիսի հետ պոկվում են իրենց տե-  
ղից ու կպչում մի նոր առողջ տեղի, այստեղ ել  
վարակում և այդպիսով հաղը կարող է նպաս-  
տել ամբողջ թոքերի վարակմանը։

Թոքախտի նշանները

Հազն ու խորիս սկզբում շատ քիչ են լի-  
նում, հետո հիվանդության զարգացման հետ

շատանում են։ Հազը հաճախ առաջին յերե-  
վույթն ե լինում, վոր թոքախտավորին զգալ ե  
տալիս նրա հիվանդ լինելը՝ հազը նրա առաջին  
դանգատն ե լինում։

Բայց մարդ վարակվելուց հետո դեռ յեր-  
կար ժամանակ բոլորովին չի հազում և խորխ  
չի ունենում, չնայած վոր հիվանդությունը  
ծածուկ ու կամաց-կամաց զարգանում է։

Այս դեպքում թոքախտի բացիլներն ի-  
րենց սկզբնական բույներից արյան հետ միա-  
սին տարվում են թոքերի մյուս տեղերն և վա-  
րակման նշանները՝ հազը, խորխն և այլն յե-  
րեսում են շատ ուշ՝ յերբ հիվանդությունը բա-  
վական զարգացած է լինում։

Պատահում են դեպքեր, յերբ հիվանդու-  
թյունը ծածուկ զարգանում է առանց մի վորեե  
զգալի նշանի, բացիլներն ուտում, վտեցնում  
են մի վորեե արյունատար անոթի պատը։ Ա-  
նոթը պատովում ու արյունը թափավում է թո-  
քերը. մարդ սկսում է հանկարծ հազար ու  
արյուն թքել և այդ բովելից է միայն նա իրեն  
հիվանդ հաշվում։

## ԹՈՔԱԽՏԻ ԲԱՑԻԼՆԵՐԻ ԹՈՒՅՆԻ ԱԶԴԵՑՈՒ- ԹՅՈՒՆԸ

Թոքախտի բացիլներն զարդանալով թույն  
են արտադրում, վորն աղղում ե վոչ միայն  
բացիլների նստած տեղի վրա, այլ այդ թույնի  
մի մասը ծծվում է արյան մեջ, ցրվում ամբողջ  
մարմինը, թունավորում նրան:

Մարդ առանց իմանալու, վոր նա թոքախ-  
տով հիվանդ է, սկսում է թուլանալ, նիհարել:  
Այն աշխատանքը, վոր մինչև այդ նա կատա-  
րում եր հեշտությամբ, հիմա շատ շուտ հոգ-  
նեցնում է նրան: Միաժամանակ սկսում է քիչ-  
քիչ տաքացնել ու գիշերները հաճախ քրտնել:

Ընդհանուր թուլությունը, հեշտ հոգնելը,  
տաքության թեթև բարձրանալը թոքախտի  
առաջին, շատ շուտ արտահայտվող յերեսութ-  
ներից են: Նրանք լինում են այն ժամանակ,  
յերբ թոքախտի պարզ ցուցանիշներ հիվանդը  
դեռևս չի ունենում ու նա դրանց վրա առանձին-  
ուշադրություն չի դարձնում, կարծելով թե  
դա չնչին բան է, «կանցնի»:

Բայց թոքախտը ծածուկ կերպով շարու-  
նակում է զարդանալ ու շատ շուտով նա զգալ է

տալիս իր գոյության մասին. յերեսում են Հա-  
ղը, խորիս և յերբեմն ել արյունահոսությունը:

### ԹՈՔԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Թոքախտի բացիլները շարունակում են  
զարգանալ, առաջացնել նոր ու նոր խոցեր:  
Ծնչելու ժամանակ մարդ ներս ե շնչում նոհ  
թոքախտ առաջացնող ուրիշ մանրեներ, վո-  
րոնք տեղավորվելով խոցերի վրա, լրացնում  
են թոքախտի բացիլների գործը:

Նրանք յերկուսը միասին շարունակում են  
քանդել թոքերը, խորացնել խոցերը: Խոցերի  
տեղը թոքերը սկսում են «հալվել», մաշվել,  
փտել-թարախոտել, ինչպես ամեն մի վերք,  
ու հազարուց դուրս թափվել իրրե թարախ պա-  
րունակող խորխ:

Հիվանդի ամբողջ մարմինը գնալով ավելի  
շատ ե թունավորվում, նա թուլանում, հյուծ-  
վում ե, շարունակ հազում ու խխում ե, ջեր-  
մությունն ավելի շատ ե բարձրանում, գիշեր-  
ները քրտնելը խիստ անհանգստացնում ե նրան,  
հաճախ բութ ցավեր ե զգում կրծքում, հաճախ  
արյան բծեր ե ունենում խորխի հետ, հաճախ  
ել ուղղակի արյունահոսություն թոքերից:

Թոքերի փտող մասերը դուրս են հանգում

կամաց-կամաց ու նրանց տեղը ստացվում է մի կամ մի քանի խորշ կամ խոռոչ, այսինքն թոքերի մեջ գոյանում են փուչ տեղեր թարախոտ պատերով, վորոնք շարունակում են փրտել ու մեծացնել խոռոչները:

Այդպիսով թոքերը քայլ առ քայլ վոչընչանում են, պակսում են շնչող «փուչիկներն ու խողովակները», շնչելու համար առողջ մընացած մասերը սկսում են չբավականացնել, հիվանդն ողի պակասություն ե զգում, նու աշխատում ե շուտ-շուտ շնչել, վոր մի կերպ լրացնի այդ պակասը, նա շնչարգել ե լինում:

Հիվանդության վերը նկարագրած ցուցանիշները գնալով զարգանում են. հիվանդը բոլորովին ուժասպառ ե լինում, հազն ու շնչարգելությունը, քրտինքն ու ջերմը դառնում են խիստ տանջալի: Հիվանդը «ծանրանում» ե ու վերջը մեռնում կամ չափազանց հյուծվածությունից, կամ նրանից, վոր թոքերն այլևս բոլորովին ի վիճակի չեն շնչելու և կամ հազարուժանակ պատռվում ե թոքի մեջ մի վորեւ մեծ յերակ ու հիվանդը մեռնում ե հանկարծակի մեծ արյունահոսությունից:

**ԹՌՔԱԽՏԻ ԸՆԹԱՑՔԸ**  
Թռքախտը զանազան տեղություն ե ու-

Նենում : Պատահում են զեսթեր, յերբ հենց  
սկզբից հիվանդությունը սուր ընթացք ե ըն-  
դունում, արագ կերպով զարգանում ե ու մի  
քանի ամսում հիվանդին զերեղման իջեցնում :

Բայց ավելի հաճախ հիվանդությունը տե-  
վում է տարիներ կամ նույն իսկ տասնյակ տա-  
րիներ, մինչև վոր կարողանում է հաղթել մար-  
դուն :

Բայց միշտ ել մարդու մահով չի վերջա-  
նում թոքախտը :

Զպետք ե մոռանալ, վոր մարդկանց մեծ  
ժամը վարակված ե թոքախտի բացիլներով,  
բայց և այնպես այդ տեսակ վարակվածները  
հասնում են խորին-ծերության, բոլորովին  
չկասկածելով անգամ, վոր իրենք ունեցել են  
թոքախտ :

Դրա պատճառը մանրեների քանակը ու  
թունալիությունն ե և վարակվածի մարմնի  
դիմագրականությունը :

Կան մարդիկ, վորոնք իրենց կենցազով  
այնպես են քայքայում իրենց առողջությունը,  
վոր չնչին քանակի բացիլներն, աննշան թու-  
նալի բացիլներն ազդում են վարակվածի վրա  
և չուտ գլորում նրան զերեղման :

Միենույն ժամանակ կան և մարդիկ, վո-

բոնք թեև վարակված են, թեև նրանց հիվանդությունը զարգացած է, բայց և այնպես իրենց կենցաղով առնում են բացիլների առաջը. նրանք հիվանդ դրությամբ հասնում են մինչև անզամ խորին ծերության:

Առհասարակ թոքախտի ընթացքը մեծապես կախված է հիվանդի նիստ ու կացից:

Յեթե անքուն գիշերները, վատ սնունդը, վատ ընակարանը, չարքաշ աշխատանքը պակասացնում են առողջ կազմվածքի դիմաղքականութունը, թոքախտով վարակվածի համար այդ ազդակներն ավելի վտանգավոր են: Թոքախտը միշտ ել մահացու չե. շատ հաճախ կարելի յե բժշկվել նրանից փոխելով կենցաղի պայմանները:

### Ի՞ՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԹՈՔԱԽՏԻՑ

Յերբ մարդու վրա հայտնվում է թոքախտի սկզբնական նշանները, նա պետք է գնաբժշկի մոտ: Բժիշկը նրան դեղեր ու խորհուրդներ ե տալիս՝ բժշկում է հիվանդին, աշխատում է վերջ տալ նրա թոքախտին:

Թոքախտութը վարակման աղբյուր ե սրբիչների համար. բժշկելով թոքախտը, բժիշկը կանխում է ուրիշների վարակումը: Բայց պետք

և հիշել, վոր ավելի հեշտ ե հիվանդության առաջն առնել, քան զարգացած հիվանդությունը բժշկելը և ուստի գերադասելի յե ամեն միջոց գործադրել, վորպեսզի չհիվանդանալ՝ լսել բժշկին մինչև հիվանդանալը, քան խելքի դաւ հիվանդանալուց հետո։ Վոչ վոք չի կարող նախատեսնել, թե ի՞նչ ընթացք կընդունի իր թոքախտը, արդյոք կբժշկվի նա, թե՞ վոչ ու վորքան։ Ժամանակ և միջոցներ կպահանջի նրա բժշկությունը, վորքան տանջանքներ կպահանձառի նրան հիվանդությունը։

Յեթե կա մի վորեւե միջոց փրկելու, որինակ յերեխային, հիվանդանալու վտանգից, պետք ե աշխատել միջոցներ գործադրել, վորնա առողջ մնա և չհիվանդանա, իսկ յերկրորդ՝ ավելի հեշտ, ավելի հանգիստ, եժան ու վորոշ կերպով կարելի յե կովել այդ վտանգի դեմ, յերբ նա դեռ ևս չի մտել մարդու կազմվածքի մեջ, յերբ նա իր ավերումները դեռ չի սկսել։

Ուրեմն թոքախտի դեմ պետք ե կովել վոչ միայն միջոցներով, վորոնց նպատակն ե դուրս հանել թոքախտը հիվանդ մարդու միջից, այլ պիտի կովել նաև նրա տարածման դեմ, պիտի պայքարել նրա դեմ նախազգուշական կամ կան. խող միջոցներով։ \*

## Վորոնի են նախազգուշական միջոցները

Զանազան յերկրների տասնյակ տարիների փորձը ցույց է տվել, վոր թոքախտի դեմ տարվող կանոնավոր պայքարն իջեցնում է թոքախտով մեռնողների թիվը:

Ներկայումս պայքարը թոքախտի դեմ ավելի վորոշ ու կանոնավոր հիմքերի վրա յեղբած:

Մեզ հայտնի յե, վոր թոքախտն առաջացնում են թոքախտի բացիլները: Հատնի յե նաև, վոր թոքախտով շատ հեշտ հիվանդանում են այն մարդիկ, վորոնք «հակումն» ունեն դեպի թոքախտը, այսինքն նրանք, վորոնք թույլ են ու պատրաստի հող են ներկայացնում թոքախտի բացիլների զարգացման համար:

Այս յերկու հանգամանքի վրա ուետք եւ շասմէծ ուշադրություն դարձնել. բացիլներն են միայն թոքախտի պատճառը, մարդկանց «հակումն» ե, վոր խիստ կերպով նպաստում է թոքախտի տարածմանը:

Համապատասխան դրան ես նախազգուշական պայքարը թոքախտի դեմ պետք եւ ուղղվի մի կողմից թոքախտի բացիլների դեմ՝ նրանց վոչնչացնելու կամ գոնե քչացնելու նպատա-

կով, մյուս կողմից՝ մարդկանց գիմադրական ուժը բարձրացնելու նպատակով։

Թռքախտի բացիլների գլխավոր աղբյուրը թռքախտավոր հիվանդն է, իսկ նրանց տարածման գլխավոր միջոցը նրա խորիս։

Պետք է աշխատել, վոր բացիլները նորից չընկնեն առողջ մարդու մարմնի մեջ՝ նրա թռքերը, դա դեռ քիչ է՝ պետք է աշխատել վոչընչացնել նրանց հենց խորիս մեջ, խորիսելուց անմիջապես հետո։

Մի անգամ ընդմիշտ պետք է վերջ տալ՝ զետնին, հատակին թքելու կեղտուա ու վտանգավոր սովորությանը։

Պետք է ունենալ թքամաններ, վորոնց մեջ միայն պետք է խխել ու թքել։ Թքամանները միանգամայն անհրաժեշտ ե ունենալ բոլոր թռքախտավորների սենյակներում, բոլոր հասրակական վայրերում՝ ակումբներում, զբոսավայրերում, դպրոցներում, գործարաններում, հիմնարկություններում և այլն։ Հարկավոր ե նրանց ունենալ առհասարակ բոլոր տներում ու փողոցներում։

Նպատակահարմար ե թքամանների մեջ լցնել մի վորեւ ախտահանիչ դեղ (բացիլլասպան ճար)։ Յերբ այդ դեղը չկա, անհրաժեշտ

Ե նրա տեղը թքամանների մեջ ջուր լցնել։ Թքամանները պետք ե լինեն բարձր ու խոր, նախ վորպեսզի թքելուց նրանց միջից ջրի կաթելները թքի հետ միասին դուրս չմոչեն ու ապականեն իրենց շուրջը, յերկրորդ՝ վոր ճանձերը խխի վրա չնստեն ու հետո տարածեն բացիւները։

Կեդտոտ ու անկանոն պահվող թքամաններն իրենից կարող են աղբյուր լինել բացիլների տարածման։

Ամեն որ թքամանները պետք ե մաքրել, լվանալ ու նորից լցնել դեղով կամ ջրով։

Թռքախտավորների համար շինված մեծ հիվանդանոցներում ամեն որ բոլոր թքամաններից խորիս հավաքում, յեփացնում կամ այրում են, իսկ թքամաններն ախտահանում են յեռացնելով, տաք դոլորշիով կամ դեղով, իսկ առորյա կյանքում բավական է խորիս թափել արտաքնոց և թքամանը տաք ջրով մաքուր լվանալ։

Գոյություն ունեն նաև գրպանի թքամաններ, լավ փակվող տուփեր։ Այդ թքամանուփը հիվանդը կրում է իր հետ, թե տանը և թե գրսում ու հազարիս խխում և նրա մեջ։

Մյուս կարեռը և ուշաղրության արժանի

Հանգամանքը, թոքախտավորների հազարու-  
ժամանակ նրա բերնից դուրս թուղող խորխի-  
մանը կտորներն են, վորոք լողում են թոքախ-  
տավորի սենյակի ողում ու վարակում այդ ողը  
շնչողներին:

Խորխի այդ մանը կաթլիկները վնասակար  
են նաև հենց հիվանդի համար եւ, վորովհետե-  
նրանց հետ նորից ներս շնչվող բացիլները կա-  
րող են հիվանդացնել հիվանդի թոքերի նոր ու  
նոր տեղերը: Ամեն կերպ պետք եւ խանգարել  
այդ կաթիլներին ողն ընկնելը:

Դրա համար հիվանդին պետք եւ սովորեց-  
նել հազարու ժամանակ թաշկինակով բերանը  
ծածկել, ծայրահեղ դեպքում, յերբ հիվանդը  
թաշկինակ չունի, հազարիս նա իր ձախ ձեռքի  
դաստակի յերեսը պետք եւ դնի բերանին ու այդ  
ձեռքը շուտ-շուտ լվանա սապոնով: Հազարիս  
և փոշտալիս պետք եւ շուռ տալ յերեսն ուրիշ  
կողմ:

Յերբ թոքախտավորի սենյակի պատու-  
հանները յերկար ժամանակ փակ են մնում, այդ  
սենյակի ողը հարուստ եւ դառնում բացիլներով  
և չափազանց վտանգավոր եւ նրա հետ  
առաջընկած համար: Ուստի հարկավոր եւ հի-  
վանդի սենյակի պատուհանները շարունակ բաց

պահել, վորակեսղի սենյակի ուր հաճախ  
փոխվի ու նրանում գտնվող բացիլներն ել դուրս  
դան ու ցըվեն:

Ցուրտ յեղանակներին ել պիտի ողափոխել  
սենյակը որեկան մի քանի անգամ. ինչպես կը  
տեսնենք, դա անհրաժեշտ է նաև հիվանդի ա-  
ռողջությունը վերականգնելու համար:

Հասկանալի յե, վոր թոքախտի տարած-  
ման դեմ ամենաեյական միջոցը կլինի թոքախ-  
տավորների խիստ առանձնացումը, բայց դա  
անհնարին է անել: Մնում է միայն ցանկանալ,  
վոր թոքախտավորն ունենա առանձին սենյակ՝  
դա ողտակար է նրա առողջությունը վերա-  
կանգնելու համար, ողտակար է նաև նրան շըմ-  
ջապատողների համար, վորոք թոքախտով վա-  
րակվելու վտագին ավելի քիչ կյենթարկվեն:

Բացի վերոհիշյալից, նախազգուշական  
միջոցներ պետք է գործադրվեն նաև թոքախ-  
տավորի սպիտակեղենի, անկողնու, դդալի,  
բաժակի և այլ իրերի վերաբերմամբ:

Հիվանդի շորերն ու տեղաշորերը լվանա-  
լուց առաջ պետք է յեփացնել: Նա պետք է ու-  
նենա առանձին անկողին, առանձին տիսե,  
գդալ ու բաժակ. նրա ամաները պետք է լվաց-  
վեն ու սրբվեն առանձին:

Պետք ե զգուշանալ հասարակական վայրերի ընդանուր բաժանելով ու գավաթներով ջուր խմելուց :

Պետք ե խուսափել հիվանդների կամ կասկածավորների հետ համբուրվելուց, պետք ե պաշտպանել մանավանդ յերեխաներին, վորովհետեւ համբուրելու ժամանակ թոքախտովը բերանից կամ շրթունքներից բացիլներն անցնում են առողջի վրա ու կարող են վարակել նրանց : Զպետք ե մոռանալ, վոր յերեխաները շատ շուտ են վարակվում թոքախտով և մարդիկ գլխավորապես յերեխայական հասակումն են վարակվում թոքախտով : Պետք ե վերջ տաւ հետեւյալ վատ սովորությանը՝ կերակրել յերեխային իր բերանից, կամ ծծակ—«սոսկա» տալ նրան :

Մենք գիտենք, վոր հիվանդ կենդանիների հում կամ կիսայեփ կաթն ու միսը կարող են պարունակել իրենց մեջ թոքախտի կենդանի բացիլներ ու նրանց գործադրողը յենթարկվում ե վարակվելու վտանգին : Ուստի այդ վրտանգից զերծ մնալու համար կաթն ու միսը գործածելուց առաջ անհրաժեշտ ե լավ յեփացնել, վորպեսզի նրանց մեջ յեղած բացիլները կոտորվեն :

թված նախազգուշական միջոցները նպատակ ունին վոչնչացնելու կամ գոնե քչացնելու թոքախտի բացիլներին, խանգարելու նրանց հիվանդից առողջին անցնելն ու թոքախտ տարածելը: Յերջանիկ կլիներ մարդկությունը, յեթե նրան հաջողվեր այդ կարգի միջոցներով միանգամից վերջ տալ նրանց՝ բացիլներին, ուրեմն և թոքախտին: Բայց նրանցից մե մասին մեր հարվածները, մեր գործադրած միջոցները չեն հասնում ու մնալով կենդանի, նրանք ընկնում են նոր ու նոր մարդկանց թոքերը, վոմանց հիվանդացնում, իսկ վոմանք ել այդ մարդկանցից մնում են առողջ, չնայած, վոր թոքախտի բացիլներ են ներս չնչել կամ կուլտվել: Հիվանդանում են նրանք, ովքեր նախապատրաստված, տրամադրված են թոքախտով վարակվելու, վորոնց մեջ բացիլները հեշտությամբ են զարգանում՝ ովքեր հակումն ե ունենում դեպի թոքախտը, իսկ ով հակումն չի ունենում, նա մնում է մեծ մասամբ առողջ: Ուրեմն մեր ջանքերը պիտի ուղղված լինեն նաև այդ հակման դեմ, պիտի այնպես անել, վորմարդ հակում չունենա դեպի թոքախտը կաւդոնիե քիչ մարդիկ ունենան այդ հակումը:

### Ինչպես անել այդ

Թոքախտի դեմ պայքարը, ինչպես և բոլոր  
վարակիչ հիվանդությունների դեմ, պահան-  
ջում եւ յերկու կարգի միջոցներ՝ հասարակա-  
կան և անձնական. բարելավել աշխատանքի և  
կենցաղի պայմանները—ահա հասարակական  
միջոցները:

Հայտնի եւ մեզ, վոր մութ, նեղ ու խոնավ  
բնակարանը, ծանր ու հոգնեցուցիչ աշխատան-  
քը (Փիղիքական և թե մտավոր), փոշոտ, վը-  
նասակար նյութեր արտադրող ու անհարմար  
չենք ունեցող գործարանները, վատ սնունդը,  
անկանոն կյանքը, ալկոհոլն ու ծխելը, յերկա-  
րատե ու ծանր հիվանդությունները, ծանր  
հոգսերը և այլն կազմալուծելով, թուլացնելով  
մարդուն, ջլատելով նրա ուժերը, ստեղծում  
են նրա մեջ հակում դեպի թոքախտն ու մեծա-  
պես նպաստում են թոքախտի տարածմանը:

Պետք եւ բարելավել աշխատանքի առողջա-  
պահական պայմանները, պետք եւ կրծատել վը-  
նասակար աշխատանքների բանվորական որը,  
հանել բանվորին մութ ու խոնավ նկուղներից  
ու հնարավորություն տալ նրան ունենալ լուսա-  
վոր, արեստ, ազատ բնակարան և սննդատու-  
կերակուր, բարձրացնել գյուղացուն գետնա-

փոր տնակներից զետնի յերեսը, սովորեցնել  
նրան շինել ընդարձակ, արեսու ու լուսավոր  
խրճիթներ—մի խոսքով կռիվ մղել կյանքի  
ծանր ու վնասակար պայմանների դեմ և այդ-  
պիսով կարելի կլինի փրկել բազմաթիվ կյան-  
քեր թոքախտից :

Թոքախտն արդարացի կերպով կոչվում է «բբ-  
նակարանի հիվանդություն»։ բնակարանի սղու-  
թյունը, բնակիչների կուտակումն ամենասոս-  
կալի ազդեցությունն է թողնում թոքախտի և  
բնդհանրապես պալարախտի վրա։ Հետեւյալ  
թվերը պարզ ապացուցում են այդ խոսքերը։  
100 մեռնողներից—թոքախտից մեռել են 31%  
այն տնձանցից, վորոնք ապրում են 1—3 սենյա-  
կում, 17 %-ը՝ 4 սենյակում ապրողներից և  
10%՝ 6 սենյակում ապրողներից, այսինքն՝ ում  
բնակարանը մեծ է, ում բնակարանը շատ սե-  
նյակներ ունի, պալարախտից քիչ է մեռնում։  
Թոքախտի վրա մեծ ազդեցություն ունի և  
դրազմունքը, վորը պարզ յերեսում և Բուդա-  
պեշտ քաղաքի վիճակագրական տվյալներից։  
100 մեռնողներից թոքախտից մեռել են.

Առաղձագործներից . . . . . 46 անձ

Կոչկակարներից . . . . . 44 »

Փականագործ . և դարբիններից . 41 »

Ծառայողներից	· · · · ·	40	»
Դեղձակներից	· · · · ·	38	»
Քարտաշներից	· · · · ·	20	»
Վաճառականներից	· · · · ·	20	»
Որավարձ բանվորներից	· · · · ·	30	»

Այս թվերը ցույց են տալիս, վոր թոքախտից առավելապես մեռնում են այն աշխատավորները, վորոնք աշխատում են վոչոտ շենքերում, ճնշված ողի մեջ և վոչ բացողյա։ Այս տեսակետից մեծ նշանակություն ունի աշխատավորներին լավ սնունդ մատակարարելը։ Գեշերային սանատորիումների հիմնելը, վորտեղ որվա ծանր և վոչոտ շենքում աշխատելուց հետո բանվորները ստանում են լավ սնունդ և առողջարար ողով հարուստ ննջարան։ Միևնույն նպատակին են ծառայում և առողջարար կլիմառւնեցող տեղերում հանգստյան տների հիմնելը, վորտեղ բանվորները չարքաշ աշխատանքից հետո հեշտությամբ վերականգում են իրենց. քայլքայլած ուժերն ու առողջությունը։

Այժմ մնում է մեզ մի քանի խոսք ասել թոքախտի ղեմ սլայքարելու վերջին միջոցի՝ թոքախտի բուժման մասին։ Ի՞նչ պետք ե անել, յերբ թոքախտի բացիլները ներս են չնչվել թո-

քերը և սկսել են զարգանալը, յերբ մարդ արդեն հիվանդացել է թոքախտով:

Շատերը կարծում են, վոր թոքախտավորին այլևս վոչ մի փրկություն չկա, վոր անհնարին ե նրան բժշկելը: Խիստ սուր արդեն մեծ չափեր ընդունած թոքախտը դժվար է յենթարկվում բուժման, բայց ժամանակին նկատած ու ավելի դանդաղ ընթացք ունեցող թոքախտը բուժելի յե, միայն դրա համար հաճախ պահանջվում է տարիների կանոնավոր խիստ ու համբերատար բժշկություն:

Համենայն դեպս թոքախտավորի կյանքը շատ տարիներով յերկարացնել հնարավոր է:

Մեր նպատակը պետք է լինի այդ հիվանդին հասցնել նոր ու նոր ոժանդակ ուժեր, ոգնել նրան, վորպեսզի նա հաղթող հանդիսանառ վոչնչացնի բացիլներին կամ գոնե զսպի նըրանց, թույլ չտա նըրանց շարունակել ավերել թոքերը:

Դրա համար հիվանդին պետք է տրամադրել լավ սնունդ, մաքուր ող, արե, ու հանգիստ անվրդով կյանք:

Ամեն որ նա պիտի ունենա տաք, սննդաբար, փոփոխվող կերակուր, բավականաչափ ձու, կարագ, կաթ և այլն: Նա հեռու պիտի

մնա հոգնեցնող զբոսանքներից և ծանր  
ու վնասակար աշխատանքներից, հոգսերից,  
անքուն գիշերներից, ծխելուց, խմելուց:

Վորքան հնարավոր ե շատ պիտի լինի նա  
դրսի ազատ ոգում:

Բացի դրանից, թոքախտավորը բնակու-  
թյան տեղ ընտրելիս պիտի զերադասի առողջ  
կլիմա ունեցող վայրեր, հեռու ազմկալի, փո-  
շոտ ու նեղ քաղաքներից:

Այս խորհուրդների կատարելն անխտիր ող-  
տակար ե բոլոր թոքախտավորների համար:  
Ինչ վերաբերում ե թոքախտավորին դեղորայ-  
քով ու այլ բարդ միջոցներով բժշկելուն, դր-  
բանց մասին ամեն մի հիվանդ պիտի առանձին  
խորհուրդ ունենա, վորովհետեւ այն ինչ  
վոր ոգտակար ե մի թոքախտավորի համար,  
կարող ե ավելորդ կամ նույնիսկ վնասակար լի-  
նել մյուսի համար, և առհասարակ թոքախտա-  
վորը շարունակ կապ պիտի պաշտպանի բժիշկ-  
ների, բուժարանների հետ ու ամեն մի բարդու-  
թյան ժամանակ դիմի նրանց ոգնությանը:

Կցկտուր, մասնակի միջոցներով ոլոյքա-  
րել թոքախտի դեմ անոգուտ ե:

Կատարել այն բոլորը, ինչ հարկավոր ե  
թոքախտավորին, նրա առողջանալու համար—

իր սեփական միջոցներով, շատ դժվար է. — չե՞  
վոր թոքախտը գերազանցորեն աղքատ դասի  
հիմնություն է, չե՞ վոր նա ծնունդ և ծանր  
ու վատառողջ պայմանների, իսկ նրա դեմ  
պայքարելը, նրանից բուժվելը պահանջում են  
նյութական միջոցների վատնում, տնտեսական  
բարոր դրություն:

Վո՞րտեղից գտնել այդ միջոցները:

Շատ յերկրներում վաղուց ըմբռնել են պե-  
տական միջոցներով թոքախտի դեմ կովելու  
անհրաժեշտությունը:

Բնական է, վոր այդ պայքարի անհրաժեշ-  
տությունը շատ մոտ իր սրտին ընդունել ե սո-  
վետական իշխանությունը, վորն իր սուզ մի-  
ջոցերից զգալի բաժին ե հանում թոքախտի  
տարածման դեմն առնելու, թոքախտավորնե-  
րին բժշկելու համար: Նա իր ձեռքն է վերցրել  
այդ կովի դեկը և ստեղծել ե բավական ուժեղ  
ճակատ թոքախտի դեմ:

Առողջ ու բուժիչ կլիմա ունեցող գեղեցիկ  
ամառանոցներում, անտառներում ու ծովերի  
ափերին հիմնված են թոքախտավորների հա-  
մար հատուկ, բազմաթիվ հարմար հիվանդա-  
նոցներ, վոր կը ում են սանատորիում անունը:

Սանատորիումներում սահմանված են չառ  
խիստ կանոններ հիվանդի կենցաղի վերաբեր-  
մամբ:

Նա այստեղ ստանում է իրեն անհրաժեշտ  
սնունդ, մաքուր ող, հանգիստ, մի խոսքով  
այն ամենն ինչ անհրաժեշտ են նրան առողջա-  
նալու համար:

Նա այստեղ սովորում է իրեն պահելու  
ձեր, վորոշ կարգապահություն ու դուրս գա-  
լուց հետո տանում է իր հետ այդ սովորու-  
թյունները:

Բացի սանատորիումներից, թոքախա-  
վորների համար հիմնված են հատուկ բուժա-  
րաններ—ընդունաբաններ, վորտեղ բժիշկները  
վոչ միայն նստած սպասում են, վոր հիվանդը  
դա իր մոտ, այլ նրանք իրենց ողնականների  
հետ միասին փնտում են հիվանդին իրենց ոը-  
ներում ու զործարաններում, աշխատում են  
ոգնել նրան լավ սնունդով, լավ բնակարանով,  
աշխատում են թոքախավորի ընտանիքի  
մյուս անդամներին փրկել վարակվելուց, բա-  
ցարում են հիվանդին ու նրան չըջապատող-  
ներին թոքախտի եյությունը, նրա տարածման  
ու նրանից պաշտպանվելու միջոցները, կտակ են  
հատատում հիվանդի ու նրա ընտանիքի հետ

և առհասարակ աշխատում են պահել նրանց ի-  
րենց հսկողության տակ:

Գնալով կոիվն ավելի ամուռ հիմքերի վրա  
յե դրվում է կզա ժամանակ, յերբ գիտնականը  
բանվորն ու գյուղացին ձեռք-ձեռքի տված ի-  
րենց վերջին մահացու հարվածները կտան թո-  
քախտին ու մարդկությունը՝ կտոնի իր մեծ  
հաղթանակերից մեկն ել՝ հաղթանակը թո-  
քախտի «պստիկ» բայց «ճստիկ» բացիլների  
վրա:

### ՊԱԼԱՐԱԽՏԻ ՈՒԹԻՇ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Թոքախտը—թոքերի պալարախտն է, այ-  
սինքն մի հիվանդություն, վորն առաջ է յեկել  
թոքերի մեջ պալարախտի մանրեների մտնե-  
լուց:

Բայց չպետք է մոռանալ, վոր միայն թո-  
քերը չեն յենթակա պալարախտի մանրեների  
աղղեցությանը, պետք է լավ հիշել, վոր մար-  
դու կազմվածքի բոլոր գործարաններն ել,  
ոկտած մաշկից մինչև ուղեղի պատյանները  
յինթակա յեն կոխի ցուղիկների վնասակար  
աղղեցությանը:

Վոր գործարանի մեջ բնկնում են այդ ման-  
րեները, այնտեղ ել առաջացնում են փոքրիկ

աւսուցքներ, պալարներ, վորոնք հետո իսոցի  
յեն փոխվում և լցվում թարախով:

1. Մաշկի պալարախտ.

Մաշկի պալարախտը զանազան տեսակ  
է, կոչվում է գայլախտ և գլխավորապես լի-  
նում է դեմքի վրա:

Շնորհիվ առաջացած քայքայումների դեմ-  
քըն այլանդակվում է և գայլի կերպարանք է  
ստանում. յերեկի դրա համար է, վոր հին գիտ-  
ականները գայլախտ են անվանել այդ տկա-  
րությունը:

2. Վոսկրեսերի պալարախտ.

Պալարախտի մանրեներն, ընկնելով վոս-  
կրների մեջ կամ հողերի մեջ, առաջացնում են  
նրանց մեջ տեսական բորբոքում, վորը փոխ-  
վում է թարախակույտի. այս վերջինը պատըռ-  
վում է հանելուց հետո և թողնում է իրենից  
հետո չըուժվող խուղակ, վորից անվերջ թա-  
րախ է հոսում. և այդպիսի խուղակներ վոչ թե  
մի հատ է լինում, այլ մի քանի, վորոնք անտ-  
ուկի տանջանքներ են պատճառում հիվանդ-  
ներին:

3. Ավշային գեղձերի պալարախտ կամ  
գեղձախտ.

Պալարախտի մանրեներն, ընկնելով ավ-

շային դեղձերի մեջ, առաջացնում են նրանց մեջ  
ևս ուսուցքներ, վորոնք նույնպես թարախտ-  
կույտի յեն փոխվում. դեղձերի թարախտ-  
կույտերն երկար ժամանակ մնում են հիվանդի  
կազմվածքի զանազան մասերում ուսած դր-  
բության մեջ կամ համում ու պատավում են և  
տալիս դարձյալ չըուժվող խուղակներ, իսկ  
յեթե բուժվում են, թողնում են իրենց տեղում  
այլանդակ սպի:

Դեղձերի պալարախտը կոչվում է դեղ-  
ձախտ և դերազանցապես յերեխաների վրա յե-  
լինում:

Դեղձախտը ավելի հաճախ պարանոցի դեղ-  
ձերի մեջ է լինում:

4. Ներքին գործարանների պալարախտը.

Ներքին գործարանների պալարախտը աե-  
վական բորբոքում է, վորի ընթացքը կախված  
է յուրաքանչյուր վտանգված գործարանի ա-  
ռանձնահատկությունից և կազմվածքի համար  
նրա ունեցած նշանակությունից:

### ԲՈՒԺՈՒՄ ՅԵՎ ԿԱՆԿՐԵԱԼՈՒՄ

Պալարախտի հիշյալ ձևերի բուժման և  
կանխարգելման մասին յերկար ասելիք չկա-  
րուր այն միջոցները, վորոնք գործադրվում

Են թոքախախ միջոցին, գործադրվելու յեն  
ընդհանրապես և պալարախտի ուրիշ տեսակնե-  
րի դեպքում. արեւ, լույս, արհեստական արե-  
գակ (Կվարցի ճրագ), հանգստյան տուն, սո-  
նատորիում, բացովյա դպրոց (Դպրոց անտա-  
ռում), գիշերային սանատորիում, լավ բնա-  
կարան, պատշաճավոր հագուստ, սնունդ և  
այլն. այս բոլոր միջոցները կիրառվելու յեն  
լայն կերպով, վորպեսզի բարձրացնել պալա-  
րախտին նախատրամադրվածների դիմադրա-  
կան ուժն և դիմացկանությունը, մյուս կող-  
մից ևս բարձրացնել հիվանդի պայքարի ուժն՝  
ավելի լավ կովելու նրա կազմվածքը քայքա-  
լող մանրեների դեմ:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039261

1143

ԳԻՆԵ 10 ԿՐՊ.

